ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ **գրավոր միջնորդության տեսքով**: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվորի կողմից նախապես կատարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի վճարումն՝ 2.850.950 ՀՀ դրամն, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունն՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված լինելու մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և հայցվորի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**